

ԲԱԺԱՆՈՐՊ ԱԳՐՈՒԹԻՒՆ  
 ուղիարկոյ համար 10 ծր.  
 Տարեկան 5 »  
 Վեցամսեայ 6 »  
 Սրբապետական համար Տարեկան 12 »  
 Վեցամսեայ 6 »  
 Ամերիկայի համար Տարեկան 2.50 ժր.  
 Վեցամսեայ 1.25 »  
 ԿԱՆԻՒԿ ՎՃԱՐԵԼԻ

—(—  
 Իտալացական տոյր 20 սան-  
 թիւ Ե. Երեւեկն աւելի ան-  
 ցանկերու համար 20 Օ10  
 գեղջ կրնայ :

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

# ՇՆԱՐՅՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
 ԿԸ ՀՐԱՍԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՔԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՈՐԵՐԸ

ՊԱՏԱՍԵԱՆԱՅԻՆ 3. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

Կոտակ և քրաւ դրեկ  
 Խմբագրութեան հասցին  
 —  
 Редакция на вѣстникъ  
 «Шаржумъ»  
 Варна.  
 Redaction du journal  
 «Charjoum»  
 Varna (Bulgarie)

Իրոսիւնի և չեկ տրուի

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

## ՍԵՂԱԽՈՐԸ ՄԻԱՅՆ ԿՐՈՆԱԽՈՐԸ ԶԷ

Որտեղ կայ հայ հասարակութիւն և եկեղեցի, այնտեղ կայ և զանգառ մեր կրօնաւորները, ինչ աստիճան էլ որ ունենան դրանք։ Մեր կրօնաւորները մեծ մասամբ մեղադրուած են տգիտութեան, ծուլութեան, անբարոյակաւութեան և հասարակութեան համար ոչ միայն անպէտք այլ և քիստակար տարր լինելու մէջ։ Եւ այդ մեղադրանքը դժբաղդաբար ոչ երեւակայութեան ծնունդ է ոչ էլ չափազանցութիւն։ Ամեն մի խելքը գլխին հայի համար փաստ է, որ մեր ներկայ հոգեւորականութեան մեծամասնութիւնը ընկած, ժողովրդային բարոյական և մտաւոր պահանջները ըմբռնելու անընդունակ, միայն իր փորի, ստոր բնազդներէ ետեւից ընկած և ամեն մի կենսարար հոսանքի հակառակորդ տարրն է։ Եւ այդ դառն իրողութիւնը յառաջացրել է մի կատաղի յարձակողական քննադատութիւն կրօնաւորների դէմ։ Ամեն մի լրագրի մէջ, նոյն իսկ ամենապահպանողական, տեսնում ենք հայ կրօնաւորի տգիտութեան և անբարոյականութեան այնպիսի զլեւելի մանրամասնութիւններ, որ մարդ մնում է չարած։ Մի խօսքով մեր հոգեւորականութիւնը ուղղելու հարցը, մեր կեանքի ամենածանր պայմաններում իսկ, Գամոկլեան սրի պէս կախված է մեր գլխին, և այդ սուրը հեռացնելու խնդրով աւելի զգալիում են այն տեղերում, ուր հայ ժողովուրդը անկարող է ազատ կերպով զբաղվել մեզ համար աւելի պէտքական և անհրաժեշտ հարցերով։ Մեր կարծիքով այդ յարձակումները շատ միակողմանի են. որովհետեւ մեղաւորը միայն անբարոյական և ազգայն կրօնաւորը չէ։ Մեղաւորը նոյնպէս և այն ժողովուրդն է որ կարողանում է համբերել վատ կրօնաւորին։

Ամեն մի հայ հասարակութիւն լաւ ճանաչում է իր մէջ բուն դրած որ և է անբարոյական քահանայի կամ վեպարաւորի զլեւելի կողմերը. փողոցներում ու տներում, նոյնիսկ մամուլի մէջ, գատափետում է նրան, բայց և այնպէս իր խոստովանանքը հաւատում է, մեղքերի թողութիւնը նրանից խնդրում եւ իր դաւանանքի ամենալուստ համարված ծէսերը նրա միջոցով կատարում։ Այդպէսով ամեն մի հրէշ վեպարաւոր, ամեն մի ագէս և անբարոյական քահանայ, համոզված լինելով որ ինքը, թէ և անբարոյական և ժողովրդին առելի, բայց և այնպէս նրա սրտի և հոգու տէրն է, աւելի կատաղած կերպով սուքի տակ է տալիս իր հօտի բոլոր ընկերական սրբութիւնները։ Մանաւանդ երբ համոզված է որ ժողովրդի մէջ գտնված մի քանի անբարոյական, բայց ազգեցիկ անդամների աջակցութեամբ կարող պէտք է լինի ոչ միայն իր պաշտօնը պահել, այլ և պատանշանի արժանանալ իր բարձր իշխանութեան կողմից։ Երբ մեր ժողովուրդը դեռ այնքան ազգայն է, որ կարծում է թէ անբարոյական կրօնաւորին չը պէտք է պատժել և հալածել, որովհետեւ նա եկեղեցու պաշտօնեայ է, մեր հոգեւորականութիւնը երբէք չի կարող բարձրանալ բարոյապէս. և ամեն մի քննադատութիւն ու յարձակում զուր պէտք է անցնի։ Գանի մեր ժողովրդի գաղափարը շատ սահմանափակ է իսկական մաքրութեան և սրբութեան մասին, մենք երբէք չենք կարողանալու ուղղել մեր հոգեւորականութիւնը. բոլոր քննադատութիւնները սանդի մէջ ջուր ծեծելու պէտք է նմանեն։ Աւելի լաւ է ժողովրդի աչքերը բանանք, նրան բարոյապէս բարձրացնենք, հասկացնենք որ հոգեւորականը միայն մեռելի ու պաակի համար չէ, այլ ժողովրդի սովորական անդամ է, պարտաւոր է սպրիլ իբր հայ

անհատ, բայց ոչ իբր բարձրագոյն արարած. եւ ահա ինքը ժողովուրդը իր ձեռքովը գատաւանը կը կտրի այն կրօնաւորների, որոնք իրանց գոյութեամբ միմիայն անպատուութիւն են բերում հային։

ՎԱՐՊՈ

### ՄԱՍՈՒԼԻ ՇՈՒՐՁԸ

ԵԳԻՊՏՈՍԿԱՆ ՎՓԻՒՆԻԿՈՐ—ԹԻՒ 2

Այս հանդէսի առաջին թիւին առթիւ, արդէն «Կարիճ» գրեց մանրամասն։

Երկրորդ թիւի նախալոյսով անորոշ, մշտնապատ ոճով գրուած ըլլալուն համար, ընթերցողը ոչ չինչ կրնայ հասկնալ։ Մեզ կը թուի, որ այդ «տատանմունք»ի տատանուող տեսակէտը ազգային ու քաղաքական խնդիրներու մասին պարզօրէն կը ցուցնէ գիտակցութեան բացակայութիւնը։ Թէ անցեալ և թէ այս թիւի բանաստեղծութիւնները արժանի չեն որ և իցէ քննադատութեան։ Նախընթացին համար արդէն խօսած էր «Կարիճ» իսկ ներկային մէկ ոտանաւորին նմուշը հետեւեալն է.

Գերեզմանի լուսութիւն մ'է պատեր շուրջ,  
 Երկնածովը խոր կը շողայ, կապոյտ լուրջ։

Ահա ձեզի բանաստեղծութիւն... «Օրորոցը» յոգուածէն խիստ պահպանողական հոս մը կը փչէ։ Եթէ այդ ու կին ունին զաւակ մը՝ ալ հերիք է. ընտանեկան յարկը դժոխք ալ ըլլայ, ամուսնալուծութիւն պահանջելու չէ... Ահա այն միջնադարեան ըզբղի իտէալը, զոր կը պաշտպանէ «Փիւնիկ»։ «Լեռնականի Յուշատետրը» կը խոստանայ հետաքրքրական ըլլալ։ Զէյթունն է անոր նիւթը՝ ամէն հայէ սիրուած վայր մը։ Միայն թէ կը խնդրենք Տ. Հայկ Լեռնէ, որ անտեղի գովեստներով իր հօր ու «հաւերու մասին չը փճացնէ տպաւորութիւնը, այլ միայն պատմէ այս 20—30 տարուան անցած դարձածը առանց չափազանցութեան։

«Զիւմա» ուրուագծէն, մեղքս ինչ պահեմ, բան մը չը կը ցայ հասկնալ... «Սով կայ, սով» յոգուածը փոքրիկ կոչ մըն է եգիպտոսի հայերուն ուղղուած. կը հանինք Միակ յոգուածն է որ ժամանակին ու տեղին յարմար է։ Միայն թէ հոս ալ նորէն կան ծայրալիզ գովեստներ այս ու այն անձին որ չը վայելէր լուրջ թերթի մը։ Իսկ «Փիւնիկ»ի էն հետաքրքրական մասը կը կաղմնէ մահազանները և ցաւալցութիւնները։ Տ. Ռ. Պէրպէրեանի կինը մեռեր է... Ի՞նչ ընդհանուր երեւոյթ մըն է աս, որ թերթին սուղ էջերը ատով լեցնէ մարդ։ Լա՛ւ, ըսենք թէ գրեցիք. ի՞նչը կը ստիպէ ատանկ շողմարար դարձուածներ շալլել... Աւրիշ օրինակ։ «Պէյլէրեան Դրախտի անուշաբոյր վարդն էր այն որ թառամեցաւ հաղիւ հինգ տարեկան, ծիծաղափթիթ (°) հասակին մէջ։ Մտէն ծանօթ ըլլալով սոյն վաղամեռիկի ծնողքին գորովական ու ծնելաւէր (°) նկարագրին, խորապէս կը զգանք... և այլն։ Հինգ տարեկան ազլիկ մը մեռեր է և այսքա՛ն շաղփաղփանք...»

ԲԱՐԱ

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պոլիս, 23 Ապրիլ  
 Գաղաքիս օրուան դէպքը, Հուովական Հայոց Պատրիարք, կաթողիկոս, Ազարեանի մահն է։ Այս եօթանասունամեայ ծերունին, թերեւս մեր պատմութեան մէջէն անցնէր այնչափ տակ, առանց աղէկ կամ գէշ անուն մը թողլու. բայց Հայկական վերջին արիւնոտ օրերուն մէջը, իր ունեցած արաւհոյակ դերը, զինքը ձախակողմը կանցունեն։ Երբէք չի պիտի մոռցուին իր հրատարակած նամակները Հայկական շարժումներուն դէմ, ուր կը ճգնէր ամէն բան վերագրելու ազատութեան, աւելի լայն կեանքի ձգտողներու, անձնուէր նահատակներու. իր յարգը աւելի ինկաւ, պատկե-

ըը աւելի սուտերոտեցաւ, երբ կաթոլիկ Երոզայէն եկած մեծաբանակ նպատաները ծառայեցուց փրփականաւայի :

Իհն վերջերս առանց ամօթ կամ խղճի խայթ զգալու, պաշտօնապէս կը յայտարարէր թէ վանի դաւանափոխները կը մնան իրենց նոր փարախին մէջ :

Աղարեան Պատրիարք, Հռոմի ձեռնասուն մը մինչեւ վերջին օրը անոր հաւատարիմ գործիքը եղաւ : Իր հովուական բոլոր առաքելութիւնները, իր պատրիարքական բոլոր առաւելութիւնները կը կայանային աւելի մեծ հարուած մը տալ ազգային ինքնուրոյնութեան : աւելի շատ հայեր ուժացնել իրենց ուղղափառ մայր եկեղեցիէն :

Կաթոլիկ Պատրիարք մը ըլլալով հանդերձ, ազգային ճգնաժամուն մէջ աւելի օգտակար կրնար ըլլալ ու չեղաւ : Եւ մենք ալ իրեն պէս անկեղծ մնալով կը յայտնենք որ, Հայ ազգը անոր մեռնելովը կորուստ մը չէ ըրած :

Աղարեանի փոխան Պապի նուիրակ Պօնէթթին է որ այսօր ընթացիկ գործերը կը վարէ : Եւ կը շարունակէ տեսնուիլ Օրմանեան Պատրիարքի հետ : Ինչ է ասանց տեսակցութեան նպատակը, ոչ ոք բան մը դիտէ, որովհետեւ ներկաներէն մէկն ալ բան մը չի հասկնար քանի որ լտալերէն կը խօսին :

Ձատկի Բ. օրը ընդունուած սովորութեան համաձայն, Օրմանեան Պատրիարք, Պատրիարքարանի մեծ գահաձիւնին մէջը, շնորհաւորական այցելութիւնները ընդունեց : Նկատելի է որ այս տարի շատ մեծ բազմութիւն չը կար : Խօսք առին և խօսեցան յաւիտեական խօսող Յ. Գորգէն, որ սակայն կտրճ կապեց այս անգամ և Տ. Իսաակեան, որոնց պատասխանեց Պատրիարքը, ձեռուած և չափուած խօսքերով : Բարձր ըստաններուն մէջ ալ բըռնադրօսիկ բան մը կար : շիտակը մարդ կեղծիք ընելէ ալ կը ձանձրանայ, և երկու տարի է որ մեր Պատրիարքն ու վարչապետները կեղծելէ և ազգը խաբելէ զատ ինչ գործ ըրած ունին :

Սպաննուած Ղանի պէյի տեղ, շուտով յաջորդած էր ուրիշ պալատական մը, որ իր նախորդին վախճանէն օգտուելով կը շարունակէ իր ազատ ընթացքը Բերայի մէջ : Քանի մը օր առաջ այս պալատականը նշանուոր Հայ սեղանաւորի մը մօտ կերթայ և կը հրամայէ իր ետեւէն դալ : Վերջինս, պալատական լրտեսը ճանչնալով, կը հետեւի անոր, կարծելով որ օստիկանութեան հետ գործ ունի : Պալատականը հայը կուսակցութեան Ղալաթա-Սալայի մօտ խաղարան մը և հոն

սպաննալիքով 75 ոսկի կը կորդէ : Հայը ստիպուած կը վճարէ : Բայց ուղղակի Տատեան Արթին փաշայի առեւը երթալով եղբւրութիւնը կը պատմէ : Արթին փաշա, մարդը հետը առած, կայսերական Պալատ կը վաղէ : Սովորանը գործը իմանալով մարդուն դրամը կը վճարէ և պալատականը պալատին մէջ բանտարկել կուտայ : Բայց ըսողներ կան որ այդ պալատականը Սովորանին շատ սիրելի մէկն է : Եւ թերեւս մօտերս նորէն հրապարակ ելլէ, և այս անգամ աւելի մեծ փորձանք մը դառնայ բերացիներուն զլխուն :

ԱՂԵՂ  
Յիւրիս, 22 Ապրիլ  
ԳՈՐԾԱՒՈՐԱԿԱՆ ԹԱՓՈՐ ՄԸ

Պետութիւնները իրենց բերանները խոշոր խոշոր բացած կը պօսան իրարու : «Ձէնընկէց ըլլանք» : Ասանց առաջնորդն ալ Ձարն եղաւ : Բաղդադի Պապի ըլլան ազգերը, եթէ այդ զիմակաւոր աստղարկը բազմալի արդիւնք մը տայ : Դիմակաւոր ըսի, որովհետեւ անկեղծութիւն չը նշարուիր Ձարին առաջարկին մէջ : Եթէ Թուսիոյ կայսրը անկեղծ է իր աստղարկին մէջ, ուրեմն ինչո՞ւ Ֆինլանտական հարց, որը կը միայն հետզհետէ արժարձուելու համար :

Ձէնընկէցութիւնը իրօք պիտի բաճայ մեծ պատուհաս մը Եւրոպայի վրայէն : Բայց զիս կան եղբայրասպան պատերազմներու նման արհաւիրքներ ալ, որոնց զէմ մարդկութեան փոքրագոյն մասը միայն կը կտուի : Եւ ուխտած է կտուի : Այդ արհաւիրքը, անշուտ, աւելի եւրոպական ազգերուն կրօնպատանայ : Բանուորական հարցն է սա :

Երէկ, տեղիս ընկերավարական գործարարները թափօր մը կազմեցին : Ծիւնելոյ մաքրողներ, որոնք թափօրին մէջ միայն սպիտակ տեսնուեցան, երկաթուղիի աշխատաւորներ, ներկարարներ, կոշակարներ, ձուլիչներ, դարբիններ, միքենագործներ ու զիս շատ մը արհեստաւորներ, ասանձին խումբերու բաժնուած, մասնակցեցան թափօրին : Իւրաքանչիւր խումբ ունէր իր գրօշակը եւ քառակուսի ախտակ մը զանազան վերտասութիւններով : Երբեմն նուազածուներ ու երբեմն թմբկահարներ կը նուագէին : Թափօրը կը բաղկանար մինչեւ 2500 անձերէ :

Անշուտ հարուստներ ծուռ աչքով եւ արհամարհանքով կը դիտէին թափօրը, որովհետեւ, սա անգամ մըն ալ իրենց ահանջն ի վար կը փսփսար անախորժ պահանջ մը :

Յիւրիսի գործարարներուն բազմանքն էր իրենց աշխատութեան ժամերուն նուազումը : Իսկ ընկերավարականութիւնը այդ բազմանքը փոխած է առաջարկի, որը սակէ առաջ մերժուած է ընդդիմադիր կուսակցութեանէն, այսինքն գրամատէր-գործարանատէրներէն : Սակայն ընկերավարականները չեն պարտի որ առաջարկելէ : մինչեւ որ ձայներու մեծամասնութեամբ իրականութեան հասցեն իրենց առաջարկը :

Անդրիս մէջ այս հարցին մասամբ արդէն լուծուած արուած է : Գործաւորները փոխանակ տասնի, կաշխատին ութ ժամ : ութ ժամ կը քնանան եթէ փափաքին՝ մնացածով կը

ճաշեն, կը զարգանան ու կը գործունենան :

Եթէ այս բազմանքը կատարուի, մեծ ցնձութիւն եւ ուրախութիւն պիտի ձգտուան գործարարներուն եւ գործաւորներին համար, որոնք կաշխատին միայն գործարանատիրոջ շահուն : Զուրկեցրացիները, որոնք ոչ բռնակալութեան տակ կը հեծնեն եւ ոչ Պապին մարգորս առաքելութեամբ չը շարունակուած են, պարտաւոր են գործաւորական այս կարիքի որ հարցով զբաղուելու : Իսկ, մեր պանդուխտ օրերու այս կենսական պահանջը թիմ մըն է, բազաւտելով հայրենիքի հազար ու մէկ պահանջներուն, վշտերուն եւ յոգեբուսն : Տասնեակ տեսակներով կոխաներու լինելու : Ինչպէս բանուորական հարցով կոտոր ընկերավարականներուն, նոյնպէս հայերուս ալ բազմազան կոխաներուն մասնակցողները սակաւաթիւ են : Բայց անոնք չեն վնասիր մինչեւ իրենց վերջին շունջը, և իրենց ետանդուն յարատեւութիւնը ապագայ յաղթանակի մը հաւատքը կը ներշնչէ մեզի :

Տրդաս Հ.  
Փ. Պոլիս, 26 Ապրիլ  
ՄԵՐ ՄԱՆՆԱԽՈՐ ԹԼԹԱԿԵՆ

Երէկ մեր քաղաքը տարօրինակ իրարանցումի մէջ էր Սօպրանիէի ընտրութեանց առթիւ : Փողոցները լեցուած էին շրջակայից հաւաքուած պուլկար, հրեան և մանաւանդ թուրք զինացիներու այլանդակ սէպարներով, որոնք խումբ խումբ հաւաքուած, մերթ անձայն և մերթ «Ուրբա»ներով կը զիմէին որոշեալ վայրեր իրենց քուէները տալու : Իւրաքանչիւր կուսակցութիւն նախապէս յայտարարութիւններ ցրուած էր իր ընտրելիները ներկայացնելով : Վուէարկութեան սկսելէն ստալ, ժողովրդին կատարած համակրական ցոյցերը զէպի ազատական կուսակցութեան ընտրելիները՝ արդէն գուշակել կուտային ընտրութեան կէտը :

Ուրախալի է ըսել որ քաղաքիս Հայ հասարակութիւնն ալ այս անգամ գործօն մասնակցութիւն մը ունեցաւ ընտրութեանց : Վուէ տալու իրաւունք ունեցող բոլոր հայերը, որոնց մէջ կը գտնուին նաեւ 1895ի գաղթականութեան հետ հաստատուած եւ կառավարութեան զանազան տուրքեր վճարող բազմաթիւ ազգայինները, փութացած էին իրենց ձայնը խոսնել ընդհանուր քուէարկուներուն : Արդէն մէկ քանի երիտասարդներէ բաղկացած մասնախումբ մը կազմուած էր, որ օրբաթ իրենց յաղտակական կուսակցութեան ընտրելիներէն Տօքթ. Կէննատիէֆի և Տօքթ. Տակարօֆի զատ զատ այցելութիւն տալով Հայոց գաղթականութեան կողմէ, իր համակրանքը յայտնեց և փոխադարձ համակրութեամբ ընդունուեցաւ : Ի մասնաւորի Տօքթ. Տակարօֆի զողից Հայ գաղթականութեան ջանքերը ազգային գործերը յատկացնելու մասին, և յայտնեց թէ իր կուսակցութեան սկզբունքը եղած է միշտ ջանքատէր թրքական ընտրութեան մնացած չօրպանիակաւ ազատութեան բարձր : Թէեւ գտնուեցան մէկ քանի անաղնիւ անձեր, որոնք աշխատեցան գաղթականներէ ոմանց քուէարկութեան արգելք ըլլալ, բայց ասոնք կարողացան իրենց իրաւունքները պաշտպանել :

Հոս տեղն է կարծիմ դիտել տալու բոլոր այն ազգայիններուն, որոնք

զանազան քաղաքներու մէջ մինչեւ այսօր տեղացիի եւ գաղթականի խնդիր կը ջանան յարուցանել, թէ կառավարութիւնը ինքն իսկ ջնջած է այդ զանազանութիւնը, քանի որ երկրին ամէն գործերուն և մասնաւանդ քուէարկութեան ալ մասնակցելու իրաւունքը ստուած է անոնց :

Գեր. Տ. Բարթողիմէոս Մ. Վ. Պաղճեան, որ քանի մը շարաթէ հետ ջաղաքս կը գտնուի մասնաւոր պաշտօնով, իր հոգեւունջ քարոզներով ժողովուրդը կը յորդորէ համերաշխութեան և կարգաւորութեան : Գերապատիւ Հայր Սուրբ թէ՛ եւ կեղեցուոյն սուրբ քեմէն եւ թէ՛ առանձինն կը խրատէ, կը համոզէ ժողովուրդը մոռնալ անձնական հաշիւները, չը մոռնիլ յիսկալութեան, առեւթեան, հակասակութեան կարգի կիրքերով, որոնց վնասը միշտ եկեղեցուոյն ու զարօցին դրելուն կը պայթի : Հայր Սուրբ պիտի աշխատի նոր ընտրութիւնները կատարել սահմանադրական օրինաց համաձայն, այս շարթու նախկին թաղական խորհուրդը պիտի հրաւիրէ ընտրողական ժողով կազմելու և ընտրողներուն ցանկը պատարասելու, ուր 96ի գաղթականութիւնն ալ անշուտ իր սեղը պիտի ունենայ :

Ռուսոյս, 26 Ապրիլ

Կիրակի, Ապրիլ 25ին, տեղւոյս հայոց եկեղեցիին բակին մէջ, մեծ միթինկ մը տեղի ունեցուաւ Հայկական խնդրին համար դիմում մը ընելու Լահէյի Ձինաթափի վեհաժողովին :

Ներկայ էին շուրջ 2000 հոգիներ : Ոգեւորութիւնը մեծ էր : Բազմաթիւ ծափահարութիւններ օգր թնդացուցին :

Միթինկը գրիթէ միաձայնութեամբ ընդունեց այն որոշումները, զորս ընդունած էր արդէն վառնայի միթինկը : Միափառարութիւններով ընդունուեցաւ նաեւ Տիրար Մինաս Չերազի պատուիրակութեան ստաղարկը : Եկեղեցիին դուռը դրուած գանձանակէն գոյացաւ 113 ֆրանք : Այսօր հանգանակութիւն պիտի կատարուի :

Հակառակ կարգ մը թշնամութիւններու ու չկամութիւններու, միթինկը յաջող անցաւ առանց հակաստութիւններու : Միայն թէ մեր խիստ ետանդուն տէր-պապաները ձառախօսութեան ասան դուրս ելան եկեղեցիէն և, կարծես խանդարելու չար նպատակով, սկսան դերեզմաններն օրհնել . . . ու ազոր ալ չը յաջողէին ետքը . . . զանազաններ հնչեցնել . . .

Եթէ այս ամէնը խոնգարելու համար բրին-կեցցե՛ն ուրեմն գաղտնի եւ յայտնի ազգասէրները . . .

Թղթակից

Սիլվիան, 25 Ապրիլ

Տեղւոյս Պատ. Թաղական Խորհրդոյ մասնակցութեամբ և հրաւիրանօք, ամսոյս 23ին տեղի ունեցաւ այն միթինկը որուն նպատակը արդէն յայտնի է ամիսուն : ստուար բազմութիւն մը ներկայ էր, բացի մի քանի ազաներէ : ներկայ էր նաեւ քաղաքապետութեան բժիշկ Տօքթ. Օրմանեան : Միթինկը սկսաւ Արթ. Տէր Յովհաննէս հօր կարճ ձանուցումով, և կուսեցան Տեղաթ. Թոնաֆճեան և Տօքթ. Օրմանեան : Տօքթ. Օրմանեան երկարօրէն լայնատիրով միթինկին նպատակը, խօսեցաւ թէ

ինչպէս ազատուած են փոքրիկ Յու-  
նաստանը եւ Կրեանքն, զգացուց յե-  
ղափոխութեան պէտքը եւ ի վեր հա-  
նեց նորա կործանողութիւնը: Ապա  
մանրամասնաբար նկարագրելով սո-  
վասանը Հայաստանի վիճակը, շեշ-  
տեց անոնց օգնութիւն հասցնելու  
աւելի շահեղ պետքին վրայ, եւ հրա-  
ւերեց ներկայ ժողովականները որ-  
պէս զի մասնակցին այն հանգանա-  
կութեան զոր Պատ. Թաղական Սոր-  
հուրը բացած է ի նպաստ Հայաս-  
տանի սովորոց: Ամէն ոք սիրալոյսով  
մասնակցեցաւ սոյն հանգանակու-  
թեան, որ զեռ կը շարունակուի եւ  
որ կը յուսացուի թէ կարեւոր գո-  
մարի մը հասնի: Կը լսենք որ վար-  
ժարանիս ուսուցիչք եւ երկուս աշա-  
կերաներ եւս իրենց մէջ ձեռնարկած  
են մի հանգանակութեան: Փոփոխի  
փոփոխ մըն է այս որ յառաջ եկած  
է ուսուցիչներու եւ փոքրիկներու  
ուսնեցած ազգային զգացումէն: Ընդ-  
հակառակը ցաւալի է մեր տիկիներե-  
րու բռնած անտարբեր ընթացքը,  
որոնք նոյն իսկ փոքր զոհողութիւն  
մը ընելու համար չեն ցուցներ եւ ո՛չ  
մի շարժում: Նոյնպէս ցաւալի է  
նաեւ կարգ մը անձերու վարմունքը,  
որոնք պաշտօնական մարմնոյն եւ  
ազգասիրաբար աշխատողներու գոր-  
ծերը, սրճարաններու անկիւնները,  
յանիբաւի քննադատելէ զատ ուրիշ  
զբաղում չունին: Խօսողներուն թիւը  
չատ է հոս: Իսկ գործի մարդ չատ  
քիչ ունինք:

ՎԱՀԷ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՅԻՇԱՍԱԿՆԵՐ

Անմատչելի անտառուտ եւ ա-  
պառաժուտ լեռներու մի երկար  
չլիթայ է որ Խոյթէն կերկարի  
մինչ Մօտկան գրեթէ բնական եւ  
երկրաբանական երեւոյթներով  
նման Սասունի խիզախ սարերուն:  
Այս սարափելի լեռներն ի վեր,  
պարանի մը նման, կերկարի սարի  
ճամբան օձապտոյտ զիկզկանե-  
րով այդ լեռներու եւ կիրճերու  
մէջէն: Այս տարօրինակ ուղին  
անխոտոր անցնելու համար մաս-  
նագէտ առաջնորդներու պէտք  
կայ: Մենք ալ մեր երկու հմուտ  
ուղեցոյցներու հետ, գրեթէ 12  
ժամ քալելէ վերջ, ահագին  
անջրպետը կտրելով Մօտկանու  
հիւսիսային սահմաններուն կը  
մտանանք, որոնք կը տարած-  
ուին Տաւրոսի լեռներուն մէջ  
նեղ ու երկար ձորի մը հիւսիսէն  
հարաւ Երկնցած ուղղութեամբ:

Մօտկան գաւառը, իր ընդար-  
ձակութեամբ, ահագին տեղ գրա-  
ուած է այդ լեռներու մէջ, եւ  
կը բաժնուի երկու մասերու:  
Լեռնային կամ քրդական Մօտ-  
կանն է հովտային կամ հայկական  
Մօտկան: Այս վերջին բաժնին  
մէջ է Գղեխ հայ գիւղը, որով  
հայկական Մօտկանը որ 8-10 հայ  
գիւղերէ կը բաղկանայ, բոլոր-  
րովին բնական բաժանումով կան-  
ջատուի լեռնային Մօտկանէն:  
Կարելի է ընդունիլ որ Խորենա-  
ցիին յիշած Գղեխ հին գաւառին  
տեղը հոս է: Այս գաւառները  
սահմանակից են Խոյթայ, Սա-  
սունի, Ձուկանու, Խարզանու եւ  
Սալնաձորոյ: Գղեխ գաւառին մէջ

հայերը բոլորովին առանձին կը  
ընակին, եւ ներթափալ են երկու  
կեղեքով իշխանութեանց—Մօտ-  
կանու գող, մարդասպան քուրդե-  
րու «խաֆիր»-ին (\*) եւ թուրք ա-  
ւաղակային կառավարութեան ան-  
խիղճ հարկերուն: Այս գաւառին  
մէջ բնակող մեր դժբաղդ աղ-  
քայնոց կրած անհուն տառապա-  
նաց եւ աննկարագրելի հարստա-  
հարստութեանց մասին աւելի ման-  
րամասնօրէն գրել յարմար ժա-  
մանակի թողլով, առայժմ բռն  
որ երբ Պաղատի խալիֆաներու  
անարգ տիրապետութեան դժնէ  
լուծը հետզհետէ կսկսի Աղձնեաց  
եւ Սալնաձորոյ ժողովրդեան վրայ  
ժանդանալ, եւ երբ քուրդ պէկերը  
Պարսկաստանի կողմէն Միջա-  
զէտք, կորդուք եւ Աղձնիքը  
զաղթելով, լեռնային այդ գա-  
ւառները կորդուքէն (Պօհտանէն  
ու ձիւրէն) սկսած մինչեւ Տարօն  
իրենց աւատական կեղեքիչ իշ-  
խանութեան տակ կանեն: այս  
քրդական մասնակի տիրապետու-  
թիւնը որ գրեթէ չորս կամ չորս  
ու կէտ դար գոյութիւն (\*\*) ունե-  
ցած է, յանուն Մահմէտի իր կրօ-  
նական շահատակութիւններն ալ  
կունենայ: Ահա այդ խռովութեամբ  
տիրապետութեան ու վայրագու-  
թեանց սկզբնաւորութեան մի-  
ջոցին կորդուք եւ Տաւրոսի  
լեռնցի ու աղստասէր հայ տոհ-  
միկներէն ոմանք իրենց հետե-  
ւորդներով ազգային կրօնը փո-  
խելով, զենքը վար չեն դներ:  
Այս կարգէն են նաեւ Մօտկանու  
լեռնցի եւ թեթեւոն քուրդերը,  
որոնց ընտանեկան ու ներքին  
սովորութիւններէն շատերը հայ-  
կական լինելէ զատ, իրենց վար-  
քի մէջ տեսնուած ժողովար-  
թիւնը եւ ընտանեկան կեանքի  
մաքրութիւնը ու պարկեշտու-  
թիւնը սոհմայիին այնպիսի բնո-  
րոյ յատկութիւններ են, որ իս-  
լամութեան սուփոտ ու կեղտոտ  
վարքերէն անկաշկանդ հայկա-  
կան արեան յատկանշական ան-  
ժըխտելի երեւոյթներ են:

Քուրտերը բաժնուած են մէկ  
քանի ցեղերու, եւ իւրաքանչիւր  
ցեղ իր ազատ բնակավայրն ունի:  
Գլխաւոր ցեղերն են—Նղկցիք,  
Գօսանցիք, Տաւլանցիք, Սու-

(\*) Խաֆիր քուրդերէն է. կը նշա-  
նակէ հայուն կողմէ իր ազգին  
արուիչք տարեկան տուրքը: Մօտ-  
կանու եւ Գղեխու բոլոր հայերը ա-  
ռանձին առանձին ենթակայ են ա-  
զգայական խաֆիրի ու կողոպուտի:  
(\*\*) Մինչեւ Քէտրիան պէկ եւ Մահ-  
մուտ իւր քուրդ պէկերը, ասկէ  
50—55 տարիներ առաջ, երբ թուրք  
կառավարութիւնը կաշառքի ուժով  
նուաճեց այս երկիրը, գրեթէ ամ-  
բողջ Աղձնիք եւ Տաւրոսի բնակիչ  
հարաւային եւ արեւմտեան մասերը ա-  
ռանց բացառութեան քուրդ պէկերու  
եւ ազաներու անմիջական իշխանու-  
թեան ներքեւ էին: Սակայն, այս  
ժամանակաւոր բռնակալութեան  
չենք կրնար հետեւցնել թէ այդ եր-  
կիրը ֆրգաստան եղած է միշտ,  
ինչպէս ոմանք կը կարծեն:

սանցիք, Բուրանցիք եւ այլն:  
Այս ցեղային բաժանումները ու-  
նին իրենց սոհմական առանձին  
ստորաբաժանումներ որոնք տուն  
անուով կը կոչուին. օրինակի  
համար Վօլօլի տուն, Բաղօլի  
տուն, Մահմուտի տուն եւ այլն:  
(Իրենց բառերով մալայ Վօլօլ,  
մալայ Բաղօլ, մալայ Մահմուտ):  
Յեղալին այս ստորաբաժանում-  
ներուն շնորհիւ, ամէն մէկ  
տոհմը, իր աղային իշխանու-  
թեան ներքեւ, կատարեալ սիրով  
եւ համերաշխութեամբ կը կապ-  
ուի միւս տոհմերուն հետ, իրենց  
չահերը պաշտպանելու համար:  
Իսկ բոլոր զանազան ցեղերը  
թշնամի են իրարու, եւ շարունա-  
կաբար կուր ու մարդասպանու-  
թիւն անպակաս են անոնց մէջ:  
ՆԱՀԱՍՊԵՏ  
(Շարունակելի)

ՆԱՄՍԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Կը ինչորեմ որ բարեհաճիք անկիւն  
մը շնորհել ներկայ հարցումներու:  
Ճիշդ է թէ Հիւրմիւզեան Տ. Գեորգ  
քահանան Շուշուէն եկող Տ. Յովա-  
կիմ Հօր խոստացած է Ձատկի տուն-  
օրհնեքներէն իրեն բաժին հանել  
500 զրուշի գումար մը ի վարձարու-  
թիւն Ձատկական տօներու առթիւ  
ուսնեցած օժանդակութեան, եւ զեռ  
այս գումարը ո՛չ վճարած է եւ ո՛չ  
ալ վճարել կուզէ:  
Ճիշդ է թէ անգլոսոս Ազգային Իշ-  
խանութիւնը համամիտ գտնուած եւ  
երաշխաւորած իսկ է այս պայ-  
մանը գործադրուելուն. եւ հիմայ  
կը թերանայ իր պարտականութեան  
մէջ:  
Այս հարցումներուն պատասխանը  
կը ինչորեմ որ արուի ի բուժումն  
զայնակած մտքերու:  
Իրազեկ մը  
Վանա, 29 Ապրիլ 1899

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Վերջերս Բեքրոպուրկի մէջ  
կազմուեցաւ նուազահանդէս մը  
Փրօֆ. Վրցէման-Արեւոտի աշա-  
կերտներէն: Այս նուազահան-  
դէսին մասնակցեցան Տիկ. Իւլիա  
Սպենդիարեան, Ռաֆայէլ Պատ-  
կանեանի քրոջ աղջիկը: Ս. Բե-  
թերսպուրկի առսեւ գերման թեր-  
թերը մեծ գովեստով կը խօսին  
այս տիկնոջ ձայնին եւ երաժշտա-  
կան ընդունակութեանց մասին:  
— Բարապուճարէն մեզ կը  
գրեն թէ հոն ալ 80 հոգիներէ  
բաղկացած միթիւնիկ մը կազմուած  
է Լահէի Ձինաթափի Վեհաժողո-  
վին գիմնու համար: Մէկ քանի  
բացառութիւններէ զատ, բոլոր  
ներկայ եղողները Հայաստանցի  
մշակներ էին, որոնք մեծ խան-  
դավառութեամբ մտիկ ըրին պա-  
րագոյին յարմար խօսուած եր-  
կու ուղեւորներու: Սովորական  
որոշմագիրները պատրաստուե-  
լով, զրկուեցան Տ. Մինաս Չերա-  
զի եւ պետութեանց պատուիրակ-  
ներուն:  
— Արժ. Տ. Մանուէլ քահանայ,  
իր պաշտօնատեղին Քանախա

հասնելով, գիւմաճ է անգլիական  
ժողովակարին վերջին դէպքերէն  
Հայոց եկեղեցիին փաստած մա-  
սերը նորոգուելու համար: Անգ-  
լիացի ժողովակար մերժած է գո-  
հացում տալ, առարկելով թէ  
կղզիին իշխանին, Երկիրոսի,  
պէտք է գիմնել, իշխանը տա-  
կա ին Բանտիա այցելած չէ:

— Թուրք կառավարութիւնը  
զեղարուեստից շքադրամ նու-  
րած է Տ. Կարապետ Փապուճեանի  
յուսանկարչական գիւտի մը հա-  
մար:

— Ստացանք Կ. Յ. Բասմա-  
շեանի «Բանասէր» հնախօսա-  
կան, պատմական, լեզուաբանա-  
կան եւ քննական հանդէսը, որ  
կը հրատարակուի Փարիզի մէջ  
երեք ամիսը մէկ անգամ վրեժ-  
ախայ: Տարեկան դինը 20 ֆրանք.  
Իսկ մէկ գիրքը 6 ֆրանք:

— Պօլսեցի Սեպուհ Գապեան  
անուն արհեստաւոր մը որ հիմա  
Ալեքսանդրիա կը գտնուի, գոր-  
ծիք մը հնարեր է հեծելանիւ-  
ներու ուղտած արագութիւնը  
ստալու համար: Մանչեսթրի մէջ  
իր գիւտին մենաշնորհը ստա-  
ցած ըլլալով, կաշխատի անկից  
օգտուիլ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՌՈՒՍՍԱ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅԵՐ

Իշխան Կալեցին, կովկասի կա-  
ռավարիչը եւ ընդհանուր հրա-  
մանատարը, մէկ տարի քննելէ  
յետոյ իր ընդարձակ շրջանին  
գործերը, վերադարձաւ Ս. Բե-  
թերսպուրկի եւ զապանի տեղեկա-  
զիւր մը ներկայացուց Ձարին:  
Այս պաշտօնագիրը կը խօսի բազ-  
մաթիւ խնդիրներու վրայ: Տե-  
ղեկագիրը որու ամփոփումը հրա-  
տարակուած է «Խայմազի մէջ», շատ  
լաւ կերպով կը պատկերացնէ ռուս  
մեթոտները տարբերազոյցութիւն-  
ները ճնշելու համար: Աւստիկ  
հայոց մասին զրուածին ամփո-  
փումը:

Հայկական խնդրին անմիջա-  
կան դժուարութիւններէն մին է  
Թուրքիոյ հայերուն գաղթումը  
Կովկաս: Ասոնք խիստ աղքատ են  
եւ երկրագործութեանէ զատ, զբա-  
ղում չունին: Իրենց հետ բերած  
են տեսակ տեսակ սարափոխիկ  
հիւանդութիւններ: Կարսի գա-  
ւառին մէջ արգէն ժանտառնեղը  
կը տիրէ: Մինչեւ իսկ կըսուի թէ  
այս գաղթական հայերէն ոմանք  
լեռը ելած են աւաղակութեան  
համար: Թուրք կառավարութիւնը  
քաջալերեց ասոնց գաղթումը իր  
երկրէն եւ հիմա շքանշանի զա-  
նոնք. իր բոլոր հիւպատոս-  
ներուն արգիլած է անցագիր  
տալ: Շատերն ալ եկած են ռու-  
սական անցագիրներով: Երբ Մ.  
Նէլիտօֆ տակաւին դեսպան էր  
Կ. Պօլիս, կովկասի կառավարիչը  
խնդրեց որ արգիլուի այս մար-

զոյ մտաքը Ռուսիա, լայն նա առարկեց թէ արեւելեան քրիստոնեաներու մասին ուստական ատենդութեան հակառակ է վերադարձնել այս խեղճերը իրենց ամայի տուները՝ գրեթէ անմիջական մահուան դիրկը։ Իշխան Կալիցին կը թէ իրերը հիմա բաւական փոխուած են։ Իսլամ մոլեռանդութիւնը հանդարտած է, և «միայն հայերուն յեղափոխական շարժումները արգելք կը լլան թրքական նահանգներուն կատարեալ խաղաղացումին»։ Մինչեւ իսկ Հայոց Կաթողիկոսը խնդրած է ընդհանուր կառավարչին օգնութիւնը, վերադարձնել իր համար այս խեղճ գաղթականները իրենց տուները, վասնզի ծանր բեռ մըն են տեղացի հայ ազգաբնակիչութեան վտիտ քսակներուն վրայ։ Ասոնցմէ ոմանք ուստական հայուհիներու հետ ամուսնացան և, արդէն հոյի տէր ըլլալով, ուստական հպատակութիւնը ընդունեցին։

Յետոյ, իշխան Կալիցին շատ գէշ յարձակում մը կը ընէ Կովկասի բոլոր Հայկական բարեգործական ընկերութեանց վրայ, որոնք իբր թէ աւելի ուշադրութիւն կը ընծայեն եղբւր քաղաքական խնդիրներու քան թէ բարեգործութեան։ Չանազան օրէնքներ դրուեցան կառավարական հսկողութիւն հաստատելու համար այս ընկերութեանց վրայ, և տեղական իշխանութեանց իրաւունք արուեցաւ անմիջապէս լուծել զանոնք, եթէ օրինական ճամբայէն վերջիկ չեղում մը տեսնուի։ Բայց բոլոր այս միջոցները շատ քիչ արդիւնք տուին։ Թէեւ այս ընկերութեանց նպատակ ցուցուած է «կրթական և նիւթական օգնութիւն տարածել Կովկասի մէջ», բայց, Կալիցինի կարծիքով, անոնք կաշխատին ազգային նեղ ոգով կրթութիւն տարածել։ Գաղտնի տեղեկութիւններէ հասկցուած է թէ այս ընկերութեանց անդամներէն շատերը Ռուսիայէն զատուելու գաղափարը կը տածեն, և թէ այս ընկերութեանց հասոյթին գէթ մէկ մասը կը վատնուի օտար երկիրներու մէջ Հայ երիտասարդներ կրթելու։ Անշուշտ բոլոր ասոնք հակառակ են «ուստական կառավարութեան պետական սկզբունքներուն», որ կը նշանակէ թէ Ռուսիա կաշխատի զարգանալու հակամէտ բոլոր ազգերը բունի հաւասարեցնել ուստագէտ զանգուածին իմացական մակարդակին։

Վերջապէս, իշխան Կալիցին խրատ կուտայ Չարին, որպէս զի Կովկասի բոլոր հայկական բարեգործական ընկերութիւնները շնչուին։ Եթէ հայերը կուզեն բարեգործութեամբ զբաղիլ, թող միանան ուստ ընկերութեանց հետ, որոնք «հեռու են ցեղական և կրօնական հակումներէ»։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Սօֆիայի խաղաղական գործակատարը ծանուցադրով մը կը պահանջէ, պուկար կառավարութեանէն, իշխանապետութեան նամակատան պարտքը միջազգային «մանտափօթութեան» հաշիւէն։ Այս պարտքը նախորդ նախարարութեան օրով գոյացած էր։

Ահա հաշիւը .

Հոկ. ամիս 1898	Փր.	46,671
Նոյ. " " "	"	44,720
Դեկ. " " "	"	43,692
Յնվ. " 1899	"	37,364

Իսկ գերման կառավարութիւնը 135,899 մարք, և պէլճիկայի կառավարութիւնը 142,542 Փր. կը պահանջեն միջազգային «մանտափօթութեան» հաշիւէն։ Բոլոր այս գումարները նախորդ նախարարութիւնը ուրիշ նպատակներու գործածած էր։

— Մ. Կէօրկի ժիվքօֆի, պուկար հայրենասէրը և քաղաքագէտը, մեռաւ յիսունհինգ տարեկան։ Մ. ժիվքօֆ իր երիտասարդ հասակէն յեղափոխական սուպարէզին մէջ մտնելով, կուտած է թուրք բռնակալութեան դէմ, և դրեթէ ամէն ազգային շարժումներու մասնակցած է։ Խորհրդարանի անդամ ընտրուելով, կոչուած է անօր ատենապետութեան պատուաբեր պաշտօնին, և քանիցս նախարար եղած է։ Սթամպուլի նախարարութեան ժամանակ կրթական նախարար ըլլալով, կազմակերպած է Պուկարիոյ գաղտնական ծրագիրները և հաստատած է ամէն տեսակ գաղտնիներ։ Ունի բազմաթիւ գրական և գիտական աշխատութիւններ։

— Պաշտօնապէս կը ծանուցուի թէ Երեսփոխանական ընտրութեանց մէջ 104 կառավարականներ և 53 ընդդիմադիրներ ընտրուած են։ 12 տեղերու մէջ ընտրութիւն չը կատարուելով, յառաջիկայ կիրակիին մնացած է Ամբողջ երեսփոխաններու թիւը 169 է։

— Հարաւային Պուկարիոյ ամէն կողմը լաւ անձրեւներ տեղացած են, և հունձքերը արդիւնաւոր ըլլալ կը խոստանան։ Բայց հիւսիսային Պուկարիոյ գիւղացի երկրագործները կը դանգոտին անձրեւի պակասութեանէն։ Կրտսի թէ Վառնայի նահանգին մէջ քանի գիւղերու հունձքերը արդէն փճացած են սիրող երաշտութեանէն։

— Վիտինի մէջ մեծ հրդեհ մը ծագելով, հարիւր տուն և խանութ այրեցան։ Վնասը մէկ միլիօն ֆրանք կը կարծուի։

— «Նարոտնի Փրավա» կը ծանուցանէ թէ նախկին նախարարութիւնը հրաժարուելու առթիւ, իւրացուցած է կառավարութեան գաղտնի վարկերը։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՆԿԼՈ—ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ. — Անգլիոյ և Ռուսիոյ միջեւ փոխանակուած համիմաստ ծանուցագիրները հրատարակուեցան։ Երկու պետութիւնները կը խոստանան Չինիան կախութիւնը յարգել և իրարու տնտեսական շրջանակին մէջ նախանձորդներ չը հանդիսանալ։ Մանչուրիա կը ճանչցուի իբր Ռուսիոյ ազդեցութեան շրջանակը, իսկ Եմանկ-Չէ-Քեանկ հովիտը Անգլիոյ։

Չին. Ս. Ս. Ս. Վեյժի Ս. Ս. Ս. — Լօնտօնի ուստ դեսպանը, Մ. սը Սթամպուլ պիտի ըլլայ Վեհաժողովին նախագահ։

— Վեհաժողովին նիստերը գոնփակ պիտի ըլլան։ Երբեմն երբեմն զիւանը տեղեկութիւններ պիտի տայ թերթերուն։

— Պետութիւնները իրենց զիրքերը պիտի գրասն այն ու բէնիկարով։ Միակ Պուկարիա թուրքիոյ ձախ կողմը պիտի նստի ինչան հպատակութեան։

— Փիլիպին, Խի. Գի. Բ. — Փիլիպիններու նշանաւորակը ընդունած է Ամերիկեան վեհապետութեան իրաւունքը կղզիներուն վրայ և Ա. ինսուլոյի հաստատական պատասխանին կը սպասուի, բայց մինչեւ որ զէնքերու թողման խնդիրը չը կարգադրուի, ընդհանուր համաձայնութիւնը յառաջ չեթար։ Չանք կը լլայ սը Ամերիկացուց պայմանները անպատուաբեր չը լլան Ակինալտոյի և Փիլիպեան բանակին համար։ Միւս կողմէ Չորավար Մաք Արթըրը կը յայտարարէ թէ երկու օրուան մէջ բոլոր ապստամբները քշած է լեւները։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ. — Լօնտօնէն կը ծոնուցանեն թէ Թրանսվալի մէջ կացութիւնը շատ ծանր է։ Կը վախցուի որ թշնամութիւններ ծագին։ Մ. Չէմպրլէյնի հեռագիրները արգէն վերջնագիրի մը հանգամանքը կը կրեն, ըէեւ տակաւին վերջնագիր չը կայ։

— Գնդապետ Էվըրթ յարձակած է Ուկանտայի մէջ Բապարէկոյի վրայ և շարաչար յաղթած է անոր։ Բապարէկո ծանրապէս վերաւորուած է, իսկ Մուանկօ թագաւորը գերի բռնուած։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — «Լ'Էլէման» կը յիշէ զրոյց մը թէ Մարշան հրամանատարը սպաննուած է ձիպութիւն քով։ Կառավարութիւնը որ և իցէ լուր ստացած չէ այս մասին։

— «Քրէօյձ-Չայթունկ» կը սէ թէ Մէքլէնպուրկ-Սթէքլիցի դքսուհին պիտի ընդունի Օրթօթօթ կրօնքը և յառաջիկայ աշունին պիտի ամուսնանայ Մօնթէնէկոյի Տանիլօ իշխանին հետ։

ԿՈՒՋԷՔ ՀՊՐՈՍՏՆԻՒ

Գիմեյէ՛ք  
Մ. Թիւթիւնճեան և Ընկ. ի Ռուստօք  
Ուր ըստ առաջնոյն կը վաճառեն, Սօֆիա քաղաքի Պուկարական կառավարութեան կողմէ վաւերացած փրճականութեան Բ. շրջանի ստուակները։  
Օտար երկիրներէ յանձնարարութիւններ ևս կընդունուին։

Ա. Չ. Գ.

Յակօր (Չատօ) նատրեան, 30 տարեկան, և Թարութիւն Միրզոյեան, 21 տարեկան, Ումբրցիները 96ի ամբարն Մարտէլէն վերադարձած են Ռուսաստան, կը խնդրուի տեղեկութիւն ունեցողներէն հաղորդել հետեւեալ հասցէին՝  
Araham Kalousdian  
233 Walnut st.  
Chelsea Mass.  
(U. S. America)

Ա. Չ. Գ.

Յառաջիկայ սեպտեմբերին պիտի բացուի Վառնայի մէջ Ա. Ամերիկեաններին տնօրինութեամբ օրիորդաց Հայկական դպրոցը, ուր Օր. Լ. Ամերիկեանաց զլիսաւոր վարժուհիի դերը պիտի կատարէ։  
Ուսանելու սովորական առարկաներէն զատ, ևս բացի Հայերէն ու Պուկարերէն լեզուներէն, որք պարտաւոր չպիտի ըլլան, կան նաեւ Ֆրանսերէն, Գերմաներէն և Անգլիերէն լեզուներ։  
Գիմեյր՝ ամուսկան 10, 6 և 3 լէվ, Գաշնակ—ամուսկան 15 լէվ 8 դասի համար։  
4—6  
Տնօրէն  
Աքր. Ամերիկեանաց

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ, ՊՆԱԺՈՒՄ

Կը տպագրուին ամէն լեզուէ այցետոմս, հասցէտոմս, նամակագրութիւն, հարսանեկան հրաւիրագիր, մահապաղ, ինչպէս նաև պրօշիւններ։  
Գիմեյրը յոյժ գիւրամատչելի։ Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին։  
ՅԱՆՉՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ Կ'ԱՆԻԿԻ

ՊՕՐՍԱ

Վառնա 1 Մայիս

ՊՈՂՏԱՅ	
Վազօն, լիպրա	55—58, հէքթօլ 9.10—9.20 ֆրանք
Արապա, լիպրա	55—60 հէքթօլ 9—10 ֆրանք
ԱՐԲԱ	
Լիպրա	42—50 հէքթօլ 6.15—6.45 ֆրանք
ՄԻՍԻՐ	
Վազօն, 55—57 լիպրա	5.80—5.90
Առապա, 55—60 լիպրա	6.20—6.30
Կիւնտէ 15—20 վազօն, 25—30 առապա	հէքթօլ տիր։
ՏԱՐԸ	
Կիւնտէ 1—2 արապա	հէքթօլ տիր։ 58—60 լիպրա, 5.50—5.75 ֆրանք
Առապա մուսուլէխի նաբօլէտն	21 ֆրանք հիսապը իլէ տիր։

Отговорникъ: А. СУКЯСОВЪ